ՀԱՏՎԱԾ Ա-ԴՈՅԻ «ԻՄ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ պատմագիտության հանրաճանաչ և միաժամանակ խորհրդային տարիներին սակավ ծանոթ պատմաբան, տնտեսագետ-վիճակագիր Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան, 1867-1954 թթ.) հուշերը, որոնք մնացել են անտիպ: Հետազոտողները ծանոթ են հեղինակի մի շարք աշխատությունների[1], սակայն կան նաև անտիպ աշխատություններ, որոնք տարբեր պատճառներով չեն տպագրվել: Ա-Դոն, որպես այդ ամենի անմիջական մասնակից և ականատես, հետազոտողի անաչառությամբ արձանագրել ու վերլուծել է նշված ժամանակաշրջանի բարդ ու հակասական իրադարձությունները: Գիտնականը, օգտագործելով իր անձնական խնայողությունները, ոչ միայն ճանապարհորդել է Արևմտյան Հայաստանում, այլև կատարել է արժեքավոր վիճակագրական ուսումնասիրություններ, որոնք առ այսօր չեն կորցրել իրենց գիտական արժեքը: Ա-Դոն ուսումնասիրել ու հայ հասարակայնությանը ներկայացրել է իր ժամանակի հուզող բազմաթիվ հիմնախնդիրներ՝ հեղափոխական շարժումները Ռուսաստանում, հայ եկեղեցական գույքի բռնագրավումը, հայ-թաթարական ընդհարումները, հայերի զանգվածային կոտորածներն ու բռնագաղթը՝ ցեղասպանությունը, 1915 թ. Վանի ինքնապաշտպանությունը, Արամ Մանուկյանի գլխավորությամբ հիմնված Վանի հայկական իշխանությունը, Վանի հայության հուլիսյան (1915 թ.) նահանջ-գաղթը, հայ և ասորի գաղթականության վիճակագրությունը, 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի Հանրապետության հռչակումն ու խորհրդայնացնումը:

Ա-Դոյի հուշերը մեզ է տրամադրել նրա դուստրը՝ տիկին Ադոլյան, որի համար շնորհակալ ենք: Հոդվածի վերնագիրը հեղինակինն է:

ԳԱՍՊԱՐՅԱՆ Ռ. Հ.
ՍԱՀԱԿՅԱՆ Ռ. Օ.

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տաճկական բանակը Սարիղամիշի տակ ջարդվեց ու սահմանի այս կողմի հայության գլխի վրա կախված վտանգն անցավ, բայց միա-ժամանակ առաջ եկավ, ցցվեց սահմանի մյուս կողմի հայության գաղթի հոսանքն իր աղետալի վիճակով և օգնության ձեռք հասցնելու հոգսով:

[1914 թ.] դեկտեմբերի կեսերին, երբ տաճկական բանակը հասել էր Արդահան և Սարիղամիշ, ու ռուսական բանակն ամբողջ ճակատով նահանջեց, այդ նահանջող բանակի հետ միասին քանդվեց ու եկավ այն շրջանների ժողովուրդը, որը գտնվում էր ռուսական բանակի գրաված օղակի մեջ:

---

[1] *Ա-Դո, Մակեդոնիա, Ս. Պետերբուրգ, 1903, նույնի՝ Հայրենիքի կարոտը, Ս. Պետերբուրգ, 1905, նույնի՝ Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, Ե., 1907, նույնի՝ Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Ե., 1912, նույնի՝ Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Ե., 1917:*

Այդ շրջաններն էին՝ Բասենը, Ալաշկերտը, Ղարաքիլիսան, Դութախը, Դիադինը, Բայազետը (տաճկական)[2], իսկ Սարայը, Աղբակը, Սալմաստը, Խոյը՝ պարսկական գծերով:

Գաղթականությունը եկավ որպես հեղեղ ու հեղեղեց Կարսի, Կաղզվանի, Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Սուրմալուի, Էջմիածնի, Երևանի և Շարուրի գավառները:

Հարկավոր էր գնալ, տեսնել թշվառության այդ հեղեղը և օգնել որևէ կերպ, և ես գնացի:

Բայազետի, Դիադինի, Դութախի և Ղարաքիլիսայի շրջաններից գաղթողները գալիս էին Իգդիրի գծով՝ ուղղություն ընտրած Էջմիածին ու Երևան: Մարգարա գյուղը հանդիսանում է Արաքսի նորագույն կամրջի կամրջագլուխը և միակ անցքը:

Մարգարայում եմ՝ կամրջի գլխին, դեկտեմբերի վերջին 4-5 օրերն են: Արտասովոր եղանակ է՝ անընդհատ անձրև է տեղում՝ մինչև մարդու ոսկորները թափանցող մանր անձրև, ճանապարհը և գյուղի փողոցները ցեխակոլոլ, ցեխ, որը շատ տեղերում անանցանելի էր ու միանգամայն դժվարին: Լույսը նոր միայն բացվում է: Գալիս են թրջված, ցեխոտված, հոգնած քայլերով, գալիս են գունատ ու հյուծված դեմքերով, գալիս են սայլերի, էշերի, եզների վրա կապոտած երեխաներով, իսկ մեծերը՝ մայրերը ոտով՝ շալակած նվվացող փոքրիկներին ու հաճախ մերկ ոտներով: Մեծերի դեմքերի վրա վիշտն է խոսում, իսկ փոքրերը լացում, հաց են ուզում: Անձրևը չի դադարում, թրջում, թրջում է ամենքին և ամենքն էլ՝ մեծ թե փոքր, մրսում, դողդողում են ու միաձայն մեկ անկյուն խնդրում:

Գալիս է հեղեղն անընդհատ մինչև ուշ գիշեր: Շատերը տեղավորվում են Մարգարայի տներում այն չափով, որքան հնարավոր է, շատերն էլ տեսնելով դրությունը, կանգ չեն առնում, այլ շարունակում են ճանապարհը դեպի Էջմիածին, Երևան, ուշադրություն չդարձնելով ո՛չ անձրևին և ո՛չ էլ ցեխին:

Օրը մթնում է՝ թխպոտ ու մռայլ օրը: Մենք մի քանի հոգի ամբողջ օրը տներ մտնելով, եկողներին տեղավորելով և հոգնել ենք, և սովել, բայց հնարավոր չէ գեթ մի վայրկյան հանգիստ առնել, որովհետև հեղեղը շարունակվում է: Ամենից անտանելին շարունակ տնացող անձրևն է և ցեխը, որը պատել է ամեն ինչ:

Մութը բոլորովին պատել է, շարժումը դադարել ու մեկեն կամրջի կողմից դեպի գյուղն է գլորվում մեկ ֆուրգոն լիքը երեխաներով, որոնց թիվը 40-ից պակաս չի լինի: Մթության մեջ ոչինչ չի երևում: Բերում են մեկ լապտեր, որի մեջ հազիվ առկայծում է ծխացող մի լույս, այդ ծխացող լույսի տակ նշմարվում են փոքրիկ երեխաներ՝ գունատված ու հյուծված դեմքերով: Նրանք թրջված են, սառած ու սոված, մի քանիսը լացում են: Դրանց պետք է տեղավորել, բայց տեղ չկա. գյուղի բոլոր տները բառի իսկական իմաստով բռնված են՝ տեղ չկա, բայց մտատանջությունը, որքան ասեք: Երկար մտածելուց հետո որոշում ենք ֆուրգոնը նույն վիճակում, երեխաներով լիքը թողնել բաց երկնքի և շարունակվող անձրևի տակ, վազ ենք տալիս հացի կետը, վերցնում ենք բավականաչափ հաց ու մեկ մեծ սփռոց, վերադառնում ենք ֆուրգոնի

---

[2] *1878 թ. Բեռլինի պայմանագրով Ռուսաստանը Օսմանյան կայսրությանը վերադարձնում է պատերազմի (1877-1878 թթ. ռուս-թուրքական) ընթացքում գրաված Ալաշկերտի հովիտը, բացի Բասենի 40 գյուղերից: Նրանցից կազմվում է վարչական նոր միավոր՝ Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի Խորասանի տեղամասը, որը նաև կոչվում է «Ռուսական Բասեն»: Օսմանյան կայսրության տիրապետության տակ մնում են Բասենի 98 գյուղեր, որոնք պայմանականորեն անվանում են «Թուրքական կամ Տաճկական Բասեն»:*

մոտ, բաժանում երեխաներին հացը, որը բոպեապես երեխաները խլում ու բերաններն են տանում: Սփոռոցը փռում ենք երեխաների գլխին ու հեռանում:

Պառկում եմ շատ ուշ: Քուն չկա: Այդ օրվա պատկերներն աչքիցս չեն հեռանում. խղճիս վրա կապար է նստած, ճզմում է:

Այս մի փոքր պատկերն է այն տառապանքի, որ հայ գաղթականությունը կրել էր ճանապարհին ու թողել ճանապարհին սառած շատ երեխաներ ու ծերունիներ:

Ես ապրեցի Մարգարայում վեց օր, և այդ օրերն ինձ համար հանդիսացան հոգեմաշ ապրումների օրեր:

Սակայն այդ հոգեմաշ ապրումների ֆոնի վրա առկայծում էր հուսատու մեկ ցոլք՝ այդ ցոլքը վեց օրերի ընթացքում իմ տեսած Մարգարա գյուղի գյուղացիության ցուցաբերած գիտակցությունն ու կարեկցությունն էր՝ հանդեպ աղետների ենթակա իր ցեղակիցների:

Մարգարայի գյուղացիների տան դռները այդ վեց օրերի ընթացքում բաց մնացին գաղթականության առաջ, նրանք ընդունում էին իրենց տներում ցեխոտված ու աղտոտված ընտանիքներ, վառում էին թոնիրները, չորացնում թաց հագուստները, լվանում աղտոտված զգեստները, շատ ընտանիքներ ստեղծում էին նույնիսկ լողանալու հարմարություններ ու հոգում ուտեստը:

Ես տեսա այդ բոլորը մեկ հայ գյուղի միջավայրում ու սփոփանք էի գտնում իմ ծանր ապրումների աշխարհում: Հայ գյուղացին, որը կրել էր շատ հալածանքներ ու ճնշումներ, այնուամենայնիվ պահպանվել է նրա մեջ կարեկցությունը դեպի տանջված մարդը, ահա այն մեծությունը, որ ունի հայ գյուղը:

ԴԻՎԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Մարիղամիշ՝ Արդահանյան ճակատամարտում կրած խայտառակ պարտությունից հետո, պարտություն, որը կլանեց Էնվերյան բանակի տասնյակ լավագույն դիվիզիաներ, տաճիկ կառավարությունը մի պահ գլուխը կորցրեց, ու պարտության պատճառները փնտրելով, նորից կանգ առավ հայ ժողովրդի վրա ու պարտության վրեժն ամբողջովին որոշեց թափել նրա գլխին:

Ճնշումներ և հալածանքներ հայերի նկատմամբ միշտ էլ եղել է, այդ ծայրահեղ չափերի հասավ զորաժողովից անմիջապես հետո, որը գնալով, ինչպես տեսանք, այլանդակ կերպարանք ընդունեց, բայց այդ բավական չհամարվեց, հարկավոր էր ավելին, կտրուկ, վերջնական միջոց:

Ահա այս կերպ դրվեց խնդիրը և որոշվեց.

հայ ժողովրդի բնաջնջումը:

Այս միտքը նոր չէր, նա գալիս էր սուլթան Համիդի[3] ժամանակներից, սակայն նոր էր գործի դնելու մեթոդը՝ իրագործելը: Սուլթան Համիդի ճտերը՝ Էնվեր[4] ու Թալեաթ[5]

---

[3] Աբդուլ Համիդ II (1842-1918), թուրք սուլթան (1876-1909): 1894-1896 թթ. նրա հրամանով կոտորվել են 300 հազար հայեր: Իր դաժանությունների՝ հայ հպատակների զանգվածային կոտորածների համար ստացել է «Կարմիր սուլթան» մականունը:

[4] Էնվեր փաշա (1881-1922)-թուրք պետական և ռազմական գործիչ: «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտկոմի անդամ, Օսմանյան Թուրքիայի զինվորական նախարար և զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ (1913-1918): Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի ցեղասպանության կազմակերպիչներից և իրականացնողներից մեկը: 1919 թ. օսմանյան Ռազմական ատյանի կող-

փաշաներն իրենց ոճրագործություններով գերազանցեցին իրենց ոճրագործ պապիկին ու որոշեցին կազմակերպել մասսայական ջարդեր:

Վանից հրաման գնաց բոլոր կայմակամներին[6], ապրիլի 6-ին կենտրոնը հավաքել շրջանի բոլոր տղամարդկանց՝ 15 տարեկանից ի վեր անխտիր ու դրանց կենտրոնից նույն գիշերը դուրս տանել, խումբ-խումբ գնդակահարել ու դիակները թաղել, անհետացնել:

Ինչպես իրագործվեց այս դիվային ծրագիրը:

Սարիղամիշի ճակատամարտից անցել էր ավելի քան երեք ամիս...[7] սահմանի մյուս կողմից հասնում էին հուզիչ լուրեր, հալածանքը հայերի նկատմամբ հասել էր ծայրահեղության, և ահա ապրիլի 8-ին Դիադինից ստացվեց մեկ հեռագիր, որով հայտնվում էին, որ Դիադին են հասել Արճեշի և Սոսկունի ջարդերից փախած հայեր: Այդ հեռագրից 3-4 օր անց չարագուշակ աղետն արդեն սկսվել է, մտմտացի այդ խոսքերը ու դուրս եկա որոնելու նրանց ու գտա երկուսին: Դրանք երկուսն էլ Արճեշի գավառից էին, մեկը Ականց քաղաքից, իսկ մյուսը Բանոն գյուղից:

Առաջինը զբաղմունքով որմնադիր էր և կոչվում էր Բինաջի Սիմոն, իսկ մյուսը հողագործ էր, որին կոչում էին Ավետի Մկո: Պատմել տվի նրանց առանձին առանձին այն, ինչ որ տեսել էին ու ճաշակել, բնաջնջման մեթոդը նույնն էր, նկարագիրները նման, ուստի կբավականանք միայն մեկի պատմածով՝ Բինաջի Սիմոնի պատմածն այստեղ բերելով. «Ավետումի նախընթաց օրն էր՝ երկուշաբթի: Հանկարծ կառավարության մունետիկը շուկա ելնելով սկսեց հայտարարել, որ 15 տարեկանից վեր բոլոր հայ տղամարդիկ հավաքվեն հյուքմաթը (կառավարության տունը)[8]: Այս հայտարարության հետ միաժամանակ դուրս եկան ժանդարմները և շրջելով փողոցները, մինչև անգամ մտնելով տները, սկսեցին պատահած հայերին քշել դեպի հյուքմաթ: Դրանց մեջ ընկա նաև ես: Ավելի քան 400 հասակավոր մարդիկ ու երիտասարդներ բերին լցրին հյուքմաթի սենյակներն ու բակը և դռները կողպեցին մեզ վրա: Մի քանի ժամ շարունակ բերում էին ու բերում՝ հասակավոր ու ջահել, հարուստ և աղքատ, քաղաքացի և գյուղացի, և որովհետև այլևս տեղ չկար, ուստի այժմ էլ սկսեցին քշել կշլան (զորանոցը), որը գտնվում էր քաղաքի հարավարևելյան ծայրում: Այնտեղ ավելի տարան, քան մեզ մոտ:

Վարանման ու մտատանջության մեջ մնացինք ամբողջ օրը: Չգիտեինք ինչ է կատարվում դուրսը: Անհամբեր եղած, շարունակ մտածում էինք, թե ինչով կվերջանա

մից հեռակա դատապարտվել է մահապատժի: Սպանվել է Միջին Ասիայում խորհրդային զորքերի դեմ մղված մարտերից մեկի ժամանակ:

[5] Մեհմեդ Թալեաթ (Թալաաթ) փաշա (1874-1921), թուրք պետական գործիչ, Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար (1913-1918), մեծ վեզիր (1917 թ. փետրվարի 4-ից մինչև 1918 թ. փետրվարի 9): Հանդիսացել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարներից մեկը: Արևմտահայության զանգվածային բռնագաղթի և ցեղասպանության գլխավոր կազմակեր-պիչներից մեկը: Պատերազմի ավարտից հետո փախել է Գերմանիա: 1919 թ. թուրքական Ռազմական ատյանի կողմից հեռակա դատապարտվել է մահվան: 1921 թ. մարտի 15-ին սպանվել է Բեռլինում վրիժառու Սողոմոն Թեհլիրյանի կողմից:

[6] Գավառապետ:

[7] Հատվածը դուրս է մնացել պատճենահանումից - ծնթ. խմբ.:

[8] Տաճկաստանում բանտերը գետեղված են կառավարական տան... (Հատվածը դուրս է մնացել պատճենահանումից: Ծանոթագրությունը Ա-Դոյինն է):

այս բոլորը: Ամեն տեսակ վատ գուշակություններ էինք անում, սակայն չէինք գուշակում այն, ինչ որ տեղի ունեցավ:

Այսպես հազար ու մի մտահոգությունների մեջ իրար վրա թափված, ծարավ ու քաղցած մաշեցինք ամբողջ օրը: Եղավ երեկո, քաղաքը լռեց ու լռեց սովորականից շուտ, որովհետև կարգադրված էր մութը պատելուն պես բոլորը տուն քաշվեն:

Եվ մինչդեռ որը զրույցով ու տխուր գուշակություններով զբաղված, և որն էլ մերկ հատակին նստած ննջում էր, հանկարծ դուռը բացվեց, ու շեմքին երևաց բանտապետ Ալի էֆենդին: Նա դուրս բերեց մեզնից 11 հոգու, կողք կողքի շարքով կանգնեցրեց միջանցքում ու բոլորիս թևերը թոկով կապեց միմյանց: Այս շարքի մեջ ընկա և ես: Ապա դուրս բերեց նորից 8 հոգի և նրանց թևերը նույն ձևով կապեց միմյանց: Այսպես վարվեց երրորդ խմբի հետ, որը բաղկացած էր 9 հոգուց: Շարքով կապկպում էին այնքան մարդ, որքան թոկը բավականացնում էր:

Երբ այս գործողությունը վերջացավ, բանտապետը դարձավ սպասող ժանդարմներին՝ թվով 8-10 հոգի և հրամայեց «Բունլարը սիզի թեսլիմ եդդիք, գոթուրյուն կշլա («Սրանց ձեզ եմ հանձնում՝ տարեք գորանոցը»)»:

Կապկպած մարդկանց համարյա բոլորին ճանաչում էի, օրինակ իմ շարքի մեջ էին Վարդան աղան, իր երկու տղաները՝ Գաբրիելն ու Սողոմոնը, Պոյաջյան Պողոս աղան և երկու տղաները՝ Ռուբենն ու Արսենը: Ճանաչում էի նաև մեզ ուղեկցող ժանդարմներին, նրանց մեջ էին Բորյազ Իսոն, Շուքրի օղլի Հեքմաթը և Կուլի օղլի Սուլեյմանը:

Ու այսպես երեք շարք կապկպածներին ժանդարմներն առաջ ձգած քշեցին, սակայն փոխանակ կշլան տանելու մեզ՝ ճանապարհը ծռեցին ու դուրս բերին նավահանգիստ տանող գծի վրա: Մթության մեջ գնում էինք առանց ծպտուն հանելու: Երկյուղն այնպես էր մեզ կոխել, որ ոչ ոք չէր վստահանում[9] ձայն հանել: Ճանապարհին մեզանից մեկ տղա խնդրեց թևի կապը մի փոքր թեթևացնել, որը սաստիկ ցավեցնում էր, բայց ժանդարմներից մեկը հրացանի կոթով այնպիսի մեկ հարված իջեցրեց տղայի թևին, որ նա ցավից ծվվաց ու կախ ընկավ շղթայից:

Քաղաքից դուրս բերելով, քշեցին դեպի Խարկեն գյուղը, որը կես ժամի չափ հեռու էր քաղաքից: Խարկենի տակ մեկ հեղեղատ կար՝ նրա միջով հոսում է մեկ փոքրի առու: Հեղեղատը կոչվում է Դարա Զամին: Ահա այդտեղ էլ բերին մեզ ժանդարմները: Եվ երբ դեռ նոր տեղ հասած չգիտեինք, թե ինչ պիտի անեն մեզ հետ, հանկարծ ժանդարմները մեկ կողմ քաշվեցին, մեկեն հրացանների բերանն ուղղեցին դեպի մեզ ու տրր-տրր-տրր կրակեցին:

«Վայ զարկվեցի»,- բարձրացավ աղեկտուր ճիչերի մեկ ժիռոր: Միմյանց փաթաթված, գնդակահար գետին թափվեցինք՝ դիակների կույտեր կազմելով: Սրտամաշ հառաչանքները և գալարուն ոռնոցներն իրար խառնվեցին: Հրացանները որոտացին երրորդ, չորրորդ, հինգերորդ անգամ, ու գնդակներն անհաշիվ թափվում էին գալարվող դիակների մեջ:

Մի քանի րոպե անցավ, հառաչանքներն ու ոռնոցները մեղմվեցին: Մոտեցան ժանդարմները և սկսեցին մեկիկ մեկիկ դիակները շոշափել, ստուգելու համար՝ արդյոք կենդանի մնացածներ չկան: Ես կորցրել էի ինձ, չգիտեի զարկված եմ, թե ոչ: Մեկ կորցնում էի գիտակցությունս ու մեկ էլ ուշքի գալիս: Հանկարծ զգացի, որ թոկն արձակեցին ու թևս ազատվեց: Մեկ էլ ճրագի լույս տեսա: Ժանդարմներից մեկը լուցկին վառում էր ու մոտեցնում ընկածների դեմքերին՝ նրանցից ով կենդանության նշան էր ցույց տալիս, ուղղում էին ճակատին հրացանի բերանը ու կրակում: Այդպես

[9] Համարձակվում:

մոտենում էին ինձ ...[10]: Օ՜, ինչ վայրկյան էր այդ, որ ես ապրեցի, տասն անգամ մահանալն ավելի դյուրին էր, քան այդ վայրկյանի ապրումը: Եվ մինչ դեռ բոպե առ բոպե սպասում էի այդ օրհասական ժամին, հանկարծ մի փոքր հեռու, մեզ վրա կրակելու ձևով տրր-տրր-տրր բացվեցին հրացանները, բարձրացավ աղիողորմ ճիչերի մի ժխոր, ու մեզանով զբաղված ժանդարմները, գնդակահարվելուց վախեցած, թողեցին մեզ ու փախան: Տրր-տրր-տրր, նորից լսվեց հրացանների որոտը: Կրկնվեց մի քանի անգամ ևս: Այնտեղ՝ մեզանից մի փոքր հեռու նոր շարքեր էին գլորվում, նոր կյանքեր էին հնձվում, ու մենք մոռացվեցինք:

Ես դեռևս չգիտեի՝ զարկված եմ, թե ոչ: Մի փոքր շարժվեցի, շոշափեցի մարմինս, ոչինչ չկար: Ինձ վրա թափված դիակները պաշտպանել էին իմ կյանքը և իրենց արյունով թրջել իմ հագուստը, որի հետևանքներն ահա այժմ էլ մնում են վրաս:

Առաջին միտքը, որ ծագեց իմ մեջ՝ փախչելու բնազդն էր, բայց ունեցածս ոտնամաններով փախչել չէի կարող, ուստի վայրկենապես արձակեցի սպանվածներից մեկի տրեխները, հագա և շարժվեցի տեղից: Օ՜ որքան մարդը հնարագետ է մահվան վտանգի ժամին: Գնում էի գնդակի արագությամբ, առանց հետ նայելու, խփում անցնում էի առուներ, դաշտեր, բլուրներ, թողնում էի հետևս ամեն ինչ ու վազում էի, ես էլ չիմանալով թե ուր: Ոչինչ չէի զգում՝ ո՜չ քաղց, ո՜չ ծարավ, ո՜չ հոգնածություն, թեև ամբողջ օրը ոչինչ չէի կերել: Միայն ականջիս հասնում էին հրացանների կրկնվող խուլ որոտները, և քայլերս ավելի ու ավելի էի արագացնում:

Ես քայլեցի ամբողջ գիշեր, ու երբ լույսը բացվեց, ինձ գտա Ալադաղի[11] ձյունոտ լանջերի վրա: Ահա այստեղ միայն զգացի հոգնածություն, որի նմանը երբեք չէի զգացել: Շրջապատը ծածկված էր ձյունով: Մեկ մեծ քարի տակ միայն սև տեղ գտա ու նստեցի հանգստանալու, բայց երկյուղը նորից պատեց ինձ: Կանգնեցի, չորս կողմս նայեցի ու հանկարծ մի փոքր հեռու քարերի տակ մարդիկ նկատեցի: Սարսափը մի բոպե կոխեց ինձ, սակայն շուտով անցավ՝ նրանք էլ շարժվեցին, ու ես նրանց ճանաչեցի: Նրանք Սոսկուն գյուղից էին՝ թվով 23 հոգի, գյուղի քահանայի հետ միասին: Դրանք, Ականցի կոտորածի լուրն առնելով, ձգել էին գյուղը և փախել:

Ահա այդ 23 հոգու հետ քաղցած և ուժասպառ չափչփեցինք Ալադաղի ձյունապատ խորխորատները նորից մեկ օր ու մեկ գիշեր և ապրիլի 8-ին իջանք Դիադին, ուր գտնվում էր ռուսական բանակը:

Մենք այսքանս մեկ հրաշքով փախանք ու ազատվեցինք, բայց Արմեշի մեջ անունը հայ տղամարդ չմնաց՝ բոլորը - բոլորը ընկան, ընկան գնդակահար ու սրախողխող:

Այս էր ահա հայկական ջարդերի ընդհանուր պատկերը, որ տեղի ունեցավ Վանի վիլայեթի բոլոր բնակավառներում միաժամանակ ապրիլի 6-ից սկսած: Սակայն այս դիվային ծրագրի մեկ մասն էր, ապա որն էր ամբողջական ծրագիրը: Ահա այդ հայտնի դարձավ ինձ, երբ Վանն ազատագրվելուց[12] հետո արդեն երկրորդ անգամ ես այցելեցի այդ պատմական քաղաքը:

Մարտ ամսի կեսերին Վանի վալի Զնդեթը[13] գտնվում էր Բաշկալեի կողմերում ու ղեկավարում էր չեթեական մեկ գունդ: Վանի շրջակա գավառներում տեղի ունեցող արդեն ծայրահեղության հասած բռնությունների և սպանությունների, և անորոշ շրջաններում էլ տեղի ունեցող զինված դիմադրությունների կապակցությամբ Զնդեթի

---

[10] Կախման կետերը փաստաթղթինն են:

[11] Ծաղկանց լեռներ:

[12] Վանն ազատագրվել է 1915 թ. մայիսի 3-ի լույս 4-ի գիշերը:

[13] Զնդեթը մինչև Վանի վալի՝ նահանգապետ նշանակվելը Բաշկալեի կայմա-կամն էր: Նրա կինը Էնվեր փաշայի քույրն էր:

և տաճկական պառլամենտի Վռամյանի[14] մեջ փոխանակվեցին մի քանի ընդարձակ հեռագրեր: Վռամյանը մեղադրում էր գավառական պաշտոնեություններին բռնություններ ու սպանություններ կատարելու մեջ, նախազգուշացնելով, որ դրանցով բացվում է խռովությունների դուռը, իսկ Զնդեթը մեղադրում էր հայերին ապստամբություններ կազմակերպելու մեջ՝ սպառնալով, որ շուտով ինքը զորքեր վերցրած կվերադառնա Վան և հույս ունի, որ խռովություններին վերջ կդնի:

Եվ իսկապես մարտի 19-ին Զնդեթը չեթեական համազգեստ հագած ու 600-ից բաղկացած չեթեական զորամասը հետևը ձգած վերադառնում է Վան, իսկ 3-4 օր անց Վան է հասնում 800 հոգուց բաղկացած հետևակ զորամաս երկու թնդանոթով:

Զնդեթը բերեց իր հետ մշակված ծրագիր, անշուշտ Պոլսից հրահանգված ու գործի անցավ:

Վանից հետո որպես լավ կազմակերպված շրջան հայտնի էր Շատախ[15], կենտրոն ունենալով Թաղը: Այդտեղ որպես կազմակերպող ուժ հանդիսանում էր Հովսեփ Չոլոյանը:

Ծրագրի առաջին մասը կայանում էր նրանում, որ նախ մեջտեղից վերացնեին ղեկավար ուժերը, և ահա մարտի 29-ին Շատախում ձերբակալում են Հովսեփ Չոլոյանին ու հինգ աչքի ընկնող երիտասարդների: Երիտասարդները վրդովված պահանջում են տղաներին ազատել՝ պահանջը մերժվում է, և հարաբերությունները խզվում են:

Լուրը երկու կողմից էլ հասնում է Վան: Զնդեթը իր մոտ է կանչում Վռամյանին և Արամին[16], ու ձևանալով որպես անտեղյակ Շատախի դեպքերի մանրամասնություններին, առաջարկում է երկու կողմերից ազդեցիկ անձերից Շատախ ուղարկել մեկ հանձնաժողով: Վռամյանը և Արամն անտեղյակ Զնդեթի մտադրություններին, ընդունում են այդ առաջարկը ու տալիս են որպես հեղինակավոր մեկի՝ Իշխանի[17] անունը, որը ճանաչված էր որպես զինվորական ուժ: Զնդեթն էլ այդ էր ուզում: Համաձայնությունը կայանում է, և ապրիլի 3-ին Իշխանը և երեք աչքի ընկնող

---

[14] Վռամյան (Դերձակյան Օնիկ, 1870-1915), ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Օսմանյան խորհրդարանի պատգամավոր:

[15] Շատախը գավառակ էր Վանի նահանգում, Արևելյան Տիգրիսի ակունքի շրջանում: Նրա հյուսիսային սահմանը կազմում էր Արտոս լեռը, արևմտյանը՝ Մոկսը, արևելյանը՝ Նորդուզի գավառը: Շատախում հաշվվում էր 110 գյուղ, որից 50-ն էին հայկական: Կենտրոնը Թաղն էր, որը բաղկացած 220 տներից: Այն գտնվում էր Սիվտկնա և Վերին Տիգրիս գետերի միախառնման և երեք խորունկ ձորերի միացման տեղում: Արևելյան Տիգրիսից ձախ գտնվում էին քրդական, իսկ աջ՝ հայկական գյուղերը: Հայտնի էր օսմանյան բռնապետության դեմ իր ըմբոստություններով, որի համար ստացել էր «Փոքրիկ Զեյթուն» պատվանունը:

[16] Մանուկյան Արամ (Մանուկյան Սարգիս, 1879-1919), հայ ազգային-ազատագրական շարժման, քաղաքական և պետական ականավոր գործիչ, ՀՅԴ անդամ: 1915 թ. Վանի ինքնապաշտպանության փաստացի ղեկավար, մայիս-հուլիս ամիսներին Վանի ժամանակավոր վարչության կառավարիչ (նահանգապետ), 1917 թ. վերջին Երևանի Հայոց ազգային խորհրդի փաստացի ղեկավար: 1918 թ. Մայիսյան հերոսամարտի ժամանակ ապահովել է հայկական զորքերի թիկունքը: 1918 թ. հուլիսի 24-ից՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար:

[17] Իշխան (Պողոսյան Նիկոլ, Նիկողայոս, 1883-1915), ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ:

երիտասարդներ[18] մեկ կողմից ու չորս հոգի, այդ թվում Վանի ոստիկանապետ Վաֆիկ բեյը Զնդեթի կողմից՝ ութ հոգի, բոլորն էլ զինված ճանապարհ են ընկնում դեպի Շատախ:

Այս ծրագրված խումբը հանգիստ է առնում Հայոց ձորի Հիրձ[19] գյուղում, և այդտեղ էլ որոշվում է գիշերել, սակայն դեռ քուն չեղած, այն պահին, երբ Իշխանն իր ընկերներով հատկացված սենյակում զրույցով են զբաղված լինում, մեկեն ներս են թափվում Վանից հետապնդած տաս չերքեզները և խմբային հրացանային կրակոցներով չորսին էլ տեղնուտեղը սպանում:

Այս դեպքի հաջորդ օրը՝ ապրիլի 4-ի առավոտյան, արդեն տեղեկացված Զնդեթն առանձին-առանձին տարբեր հեռախոսներով իր մոտ է կանչում Վռամյանին, Արամին ու Բուլղարացի Գրիգորին[20]: Դեռևս չստուգված միմիայն շշուկներ առնելով Վռամյանը գնում է, թողնելով Արամին տոմսակ, որ նա չգնա: Վռամյանը գնում է և չի վերադառնում, և մինչև այդ Արամն ու Գրիգորը զգուշացված են՝ չեն գնում դեպի Զնդեթը և փրկվում են:

Ապրիլի 4-ի երեկոյան արդեն հայտնի է դառնում դավադրությունն ամբողջովին, 5-ի առավոտը բացվում է լարված վիճակում: Այդ ու հաջորդ՝ ապրիլի 5-ի օրը քաղաքը վեր է ածվում պայքարի պատրաստվող բանակի, իսկ ապրիլի 7-ին քաղաք եկող երկու հայ կանանց միլիսների[21] կողմից վիրավորանք հասցվելու ու մոտակա հայ դիրքից այդ միլիսների վրա բացվող կրակոցներով բռնկվում է ընդհարումը[22] մեկեն, ու Վանն իր երկու քաղաքամասերով դառնում է կատարյալ պատերազմի դաշտ[23]:

---

[18] Այդ երիտասարդներն էին՝ Պողոս Թութունջյանը (մականունը Քոթոթ), Վահան Խռանյանը և Միհրան Տեր-Մարգարյանը:

[19] Հիրձում բնակվում էին 30 տուն հայեր և 70 տուն քրդեր: Պատգամավորներն իջևանել էին Քյարիմ աղա Ռաշիդի տանը:

[20] Բուլղարացի Գրիգոր (Գեզյան, Քյոզեյան Գրիգոր). - ազատագրական շարժման գործիչ: 1915 թ. Վանի Այգեստան թաղամասի ինքնապաշտպանության մարմնի անդամ: 1917 թ. կազմված Վասպուրականի հայկական իշխանությունում զբաղեցրել է զինվորական գործերի վարիչի պաշտոնը:

[21] Միլիս՝ մահմեդական բնակչությունից կազմված զորաջոկատի անդամ:

[22] Բնակչությանը սպառնացող վտանգը հարկադրում է Վանի հայությանը դիմել արտակարգ միջոցների: Ապրիլի 5-ին քաղաքի առավել հայահոծ թաղամասում՝ Այգեստանում, կազմակերպվում է «Վանի ինքնապաշտպանության զինվորական մարմին», կարճ՝ Զինվորական մարմին: Նրա անդամներն էին Արմենակ Եկարյանը (զինվորական ղեկավար), Կայծակ Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, Փանոս Թերլեմեզյանը, Ա. Մանուկյանը և ուրիշներ: Ինքնապաշտպանության իրական ղեկավարը և ոգին էր Ա. Մանուկյանը: Ապրիլի 7-ին թուրք զինվորները հարձակվում են քաղաքի մոտ գտնվող Շուշանց գյուղից Վան վերադարձող մի խումբ հայ կանանց վրա: Եղիա Նախշունյանը և Հակոբ Տիվիրզյանը միջամտում են՝ ցանկանալով պաշտպանել կանանց: Թուրքերը անսպասելի կրակ են բացում: Դրանից հետո սկսում է փոխհրաձգությունը և Վանի հերոսական ինքնապաշտ-պանությունը:

[23] 1914 թ. սկզբներին Վանում բնակիչների թիվը 41 հազար էր, որոնցից մոտ 23 հազարը հայ, իսկ 18 հազարը՝ մահմեդական: Քաղաքը բաղկացած էր Այգեստան ու Քաղաքամեջ կոչվող թաղամասերից, որոնց միջև ընկած տարածքում բնակվում էին թուրքեր: Քաղաքամեջի ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար կազմվում է Զինվորական մարմին: Նրա անդամներն էին Հայկակ Կոսոյանը (ղեկավար), Լևոն

Ընդհարումը բռնկվում է նաև Շատախում, և բռնկվում է ավելի շուտ, քան Վանի բռնկումը: Չոլոյանի և նրա ընկերների բանտարկման հետևանքով ծագած լարվածությունը շարունակվում է մինչև ապրիլի 4-ը: Շատախ է հասնում Իշխանի սպանության լուրը: Համբերության բաժակը լցվում է: Ահա այդ օրը մեկ միլիս գալիս է հայկական մեկ դիրքի մոտով անցնելու, այդ դիրքի պահակը պահանջում է միլիսից ետ դառնալ՝ միլիսը մերժում է վերադառնալ: Պահակը երկրորդ անգամ կրկնում է պահանջը, բայց միլիսը համառում է, և ահա պահակը վայր է բերում ուսից հրացանը ու կրակում: Միլիսը վայր է գլորվում, իսկ կրակոցին մեկեն արձագանքում են դիրքերը երկու կողմերից, ու կռիվը սկսվում է:

Այսպիսով Զնդեթի դիվային ծրագիրը եթե իրագործվեց շրջաններում ու տասնյակ հազարավոր մարդիկ զոհ գնացին նրա լարած որոգայթներին, ապա նրա ծրագիրը վիժեց իր՝ Զնդեթի քթի տակ՝ Վանն ու Շատախը ոչ միայն ջարդերի չենթարկվեցին, այլ ընդհակառակը հանդես եկան որպես պայքարող ժողովուրդ, և մեկ ամիս անհավասար պայքարը պատվով տանելուց հետո Զնդեթը բռնեց խայտառակ փախուստի ուղին:

Գալճյանը, Միհրան Թորոմանյանը, Միհրդատ Միրզախանյանը, Սարգիս Շահինյանը, Դավիթ Սարգսյանը և Հարություն (Հարո) Ներկարարյանը: